

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրը (ՊՅԾ), ՌԴ Ճյուղային սննդի ինստիտուտը (SIFI) և «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկը մեկնարկում են «Լավագույն դպրոցական խոհարար» մրցույթը

Մրցույթի հիմնական գաղափարն է՝ ցույց տալ դպրոցի խոհարարի մասնագիտության անհերքելի կարևորությունը և ոգեշնչել դպրոցականների համար սնունդ պատրաստող բոլոր մարդկանց, որպեսզի նրանք սիրտ ու հոգի ներդնեն իրենց գործի մեջ ու ստեղծագործ մոտեցում ցուցաբերեն աշխատանքին:

Մրցույթին կարող են մասնակցել «Դպրոցական սնունդ» ազգային ծրագրում ընդգրկված՝ Հայաստանի Հանրապետության ութ մարզերի (Արարատ, Վայոց Ձոր, Սյունիք, Տավուշ, Ծիրակ, Արագածոտն, Գեղարքունիք և Լոռի) դպրոցների ճաշարանների բոլոր հետաքրքրված աշխատակիցները:

Մրցույթը կանցկացվի երկու փուլով՝ որակավորման մրցաշար և եզրակափակիչ: Որակավորման փուլից հետո ընտրված հինգ հաղթողները կանցնեն մրցույթի եզրափակիչ փուլ:

Մրցույթի հաղթողներն արժեքավոր մրցանակներ ու մասնակցության հավաստագրեր կստանան, իսկ նրանց կողմից մրցույթին ներկայացված ուտեստները կդիտարկվեն՝ դպրոցական ճաշացանկում ընդգրկվելու համար:

«Լավագույն դպրոցական խոհարար» մրցույթին մասնակցելու համար հայտը պետք է ուղարկի դպրոցը՝ ներկայացնելով իր խոհարարի հայտադիմումը:

Մրցույթի, կանոնների և հայտերի ներկայացման պահանջների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն ստանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝ <https://clck.ru/eyKzC>

Որակավորման մրցաշարը մեկնարկում է 2022թ. ապրիլի 18-ին և ավարտվում հուլիսի 31-ին՝ ժ. 12:00-ին:

Եզրափակիչ փուլի մասնակիցների առաջադրումը տեղի կունենա 2022թ. հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը:

Մրցույթի եզրափակիչ փուլը տեղի կունենա 2022թ. դեկտեմբերին:

Մրցույթի վերաբերյալ բոլոր հարցերը կարող եք գրավոր ուղղել հետևյալ էլ. փոստի հասցեին՝ schoolcook.armenia@gmail.com:

Մրցույթին կարող եք հետևել նաև հատուկ ֆեյսբուքյան էջում, որպեսզի բաց չթողնեք կարևոր իրադարձությունները: Ահա ֆեյսբուքյան էջիդուր՝ <https://clck.ru/dnj7i>:

Խոհարարների մրցույթը Հայաստանում իրականացվող «Դպրոցական սնունդ» ծրագրի կարևոր մասը կդառնա: 2014թ.-ից ի վեր ՊՅԾ-ի տրամադրած 6 տեսակի չոր սննդի շնորհիվ մարզերի դպրոցները տաք սնունդ են տրամադրում տարրական դասարանների երեխաներին: Չուզահեռաբար՝ մարզերը «Դպրոցական սնունդ» ծրագրի մթերային մոդուլից տեղափոխվում են Ազգային ծրագիր և սկսում աշխատել դրամային մոդուլով՝ յուրաքանչյուր երեխայի հաշվարկով պետական բյուջեից ստանալով ֆինանսավորում: Հաջողությամբ իրականացվող և նորանոր մարզեր ընդգրկող ծրագրի նպատակն է պետության ֆինանսավորմամբ տարրական դասարանների աշակերտներին հավասարակշռված, տաք սնունդ տրամադրելը: Այս պահին Ազգային ծրագիր է անցել ութ մարզ, 2-ում դեռևս ծրագիրն իրագործվում է ՄԱԿ ՊՅԾ աջակցությամբ:

2017թ.-ից դպրոցների խոհարարները պարբերաբար վերապատրաստվել են դպրոցական սննդի անվտանգ պատրաստման տեխնոլոգիաների բնագավառում: «Լավագույն դպրոցական խոհարար» մրցույթը Հայաստանի տարբեր դպրոցների խոհարարներին դպրոցական սննդի պատրաստման, ձևավորման և մատուցման գործում իրենց մասնագիտական հմտությունները ցուցադրելու հնարավորություն կընձեռի: Այդ սնունդը պետք է համապատասխանի անվտանգ դպրոցական սննդի բոլոր չափորոշիչներն և սիրված լինի երեխաների կողմից:

Հաջողություն ենք մաղթում բոլոր մասնակիցներին: